ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ՝ ՔԱՐԱԿԵՐՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-3) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտի գյուղապետարանը հայտարարում է մրցույթ Քարակերտի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտի գյուղապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3):

Առաջատար մասնագետն աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի սեփականություն համարվող հողերի, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության աշխատանքներին, աջակցում է գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է միջնակարգ կրթություն, սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի <<բ>> ենթակետում նշված իր լիազորությունների հետկապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012թվականի նոյեմբերի 26-ին ժամը՝ 12-00ին Քարակերտի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով(ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս)
- Տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները բնօրինակների հետ միասին
- Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ Կառավարության 2005 թվականի մարտի 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով.
- Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.
- Արական սեռի անձինք՝ զինգրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականների պատճենները.
- Մեկ լուսանկար 3x4 չափսի
- Անձնագրի պատճեն

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Արմավիրի մարզի Քարակերտի գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարան ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻԿՀԾՀ բաժնում (հասցեն՝ ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ.0237 6-07-70, 6-46-49):

Փաստաթղթերն ընդունվում են ամեն օր ժամը 10-00 16-00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012թվականի նոյեմբերի 9-ը: